61
12.01.17թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 22 30.12.2016 թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի օրակարգը հետևյալ հարցերով

1. Թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Եղեգիս համայնքի 2017-2021 թթ զարգացման ծրագիրը հաստատելումասին:

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1			
2			
3			
4	Բ	Կ	Հ
5	Բ	Կ	Հ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N23-Ն 30.12.2016թ.

Գ. Եղեգիս
Հեռ. 24186

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի ավագանիներ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Գ. Հարությունյան			
2. Մ. Հովհաննիսյան			
3. Գ. Պողոսյան			
4. Ա. Ենոքարյան			
5. Ա. Հարությունյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Յուրիկ Մկրտչյան

Հաստատվել է համայնքի ավագանու 30.12.2016թ. թիվ 23-Ն որոշմամբ

2016թ., գ.Եղեգիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը 5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 6
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ 6
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 9
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 9
3.1. Համայնքի զարգացման տեսլական 9
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում 10
4. ՀԶԾ ֆինանսավորում 13
5.ՀԶԾ մոնիթորինգ 14

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Եղեգիս համայնքը ունի 451 մշտական բնակչություն, որից շուրջ 305-ը՝ 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև << Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոց տանող ճանապարհի և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Սուրբ Աստվածածին վանական համալիրի վերանորոգում և փլուզման կանխարգելում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջանները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է փոքր ծրագրեր, ինչպես նաև համագործակցում է <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի,Ավստրալիահայ համայքնի հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Միջնադարյան Եղեգիսը Հայաստանի ամենահարուստ համայնքներից է եղել: 13-14 դարերում այն եղել է Օրբելյան իշխանական տոհմի նստավայրը:

Գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը կառուցվել է 1703 թվականին ավելի հին եկեղեցու ավերակների վրա, իսկ սուրբ Կարապետ, Զորաց եկեղեցիները 13-րդ դարի կառույցներ են: Հատկանշական է, որ Զորաց եկեղեցում է կատարվել ռազմի դաշտ մեկնող զորքի երդման և օրհնության արարողությունները:

15-րդ դարում Լենկ Թեմուրի և այլ զավթողական արշավանքներից, այնուհետև երկրաշարժի հետևանքով ավերվել է քաղաքը: Ավելի ուշ գյուղում բնակություն են հաստատել թուրքալեզու բնակիչներ և այն անվանել՝ «Ալայազ»:

1988 թվականին Սումգայիթյան դեպքերից հետո գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով: Վերականգնվել է պատմական Եղեգիս բնակավայրի անվանումը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3050 հեկտար, որից 157 հեկտարը քաղաքացիների սեփական հողեր են, այդ թվում՝ 62 հեկտար՝ տնամերձ, 95 հեկտար՝ գյուղնշանակության հողեր:

Մնացած հողերը համայնքային են և 36 հեկտարը՝ պետական սեփականության հողեր (արոտավայրեր, խոտհարքեր):

Գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 18 կմ հեռավարության վրա, Երևանից՝ 135 կմ: Այն փռված է Եղեգիս գետի ձախ ափի սարալանջին, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1640 մ: Եղեգիս գյուղի մոտ կա հրեական գերեզմանատուն:

Եղեգիսի հյուսիս-արևմտյան մասում գտնվում են "Եղեգիս" բերդի ավերակները (Սմբատաբերդ, IX դար), արևելյան մասում՝ Սբ. Ստեփանոս (Զորաց) (XIII դար), արևմտյան մասում՝ Սբ. Աստվածածին (վերանորոգված 1703 թ.), հարավային մասում՝ Սբ. Նշան (Կարապետ) (XI-XIII դարեր) եկեղեցին, XI-XVI դարերի խաչքարեր:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց,բուժ կետ, ակումբ,գրադարան:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 11665,8 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 1670,0 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են քարի մշակման արտադրամաս 1 անհատ ձեռնարկատեր, որից 1 մանրածախ վաճառքի կետ:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում , հրեական գերեզմանատունը, Բեզոարյան այծերի առկայությունը, մատուռներ, եկեղեցիներ,բազմաթիվ խաչքարեր,Սմբատաբերդը և Սմբատ իշխանի տոհմական գեւեզմանատունը:

Համայնքում չեն գործում հյուրատներ, որոնց առկայությունը կխթանի եկամուտների ներաճին,որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրփանճեան

գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 40 (2016թ.տվյալներով) աշակերտներ:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 35: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 48:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Գյուղը խմելու և ոռոգման ջրով ամբողջական ապահովում:
Ներկայումս գյուղը սնուցող խմելու ջրի խողովակաշարի անմխիթար վիճակը նույնպես տարբեր ատյաններում բարձրացված և խիստ կարևոր հարց է: Համայնքի ղեկավարության և համայնքի առանձին բնակիչների կողմից ամեն տարի կազմակերպվող մասնակի ջրահավաքման և վերանորոգման աշխատանքները չեն կարող կատարելապես կարգավորել հիմնախնդիրը, քանի որ խողովակաշարի մեծ մասը բազմաթիվ տեղերից վնասված է:
Գյուղի պատմամշակութային հնարավորությունների լայն օգտագործում
Համայնքի տարածքը հարուստ է պատմամշակութային և բնության տարբեր հուշարձաններով, ինչը լուրջ հնարավորություն է գյուղի տարածքում զբոսաշրջության զարգացման համար: Նույնիսկ ճանապարհային այսպիսի պայմաններում գյուղն ի վիճակի չէ ընդունել զբոսաշրջիկների, որոնք հաճախում են ինչպես միայնակ կամ ընտանիքներով, այնպես էլ խմբերով: Կարևոր խնդիր է հանգստյան գոտիների ստեղծումը համայնքի վարչական տարածքում:
Զբոսաշրջության զարգացումը կնպաստի նաև Եղեգիս անվան շրջանառության և գովազդման նպատակով: Հնարավորություն կտա համայնքին մասնակցելու տարբեր միջազգային ծրագրերի:
Համայնքի ներքին նշանակության ճանապարհների ու փողոցների բարեկարգում և սանիտարահիգենիկ վիճակի բարելավում
Այս բնագավառը ևս մնալու է համայնքի ղեկավարության ուշադրության ոլորտում:
Նախատեսվում է յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեում նախատեսել միջոցներ սոցիալական խնդիրներ լուծելու նպատակով:
Առողջապահության խնդիրների առումով նախատեսվում է սերտ համագործակցություն տարբեր կազմակերպությունների, ապահովագրական գործակալությունների ու բուժհիմնարկների հետ կանխարգելիչ միջոցառումներից մինչև վարակների ու համաճարակների դեմ ամենօրյա պայքար:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2017 թվականի բյուջեի նախագծով սեփական եկամուտները նախատեսվել է 1670.0 հազար դրամ:



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 11919.5 հազար դրամ, 01.12.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են 11701.0 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 11665.8 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանասական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրակացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Եղեգիս համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: և հանդիպումների կազմակերպմանը:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը,այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոց տանող ճանապարհի և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում

Վերնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր

1. Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ
2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ

Թույլ կողմեր

1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին
2. Զբաղվածության խնդիր
3. Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ

Հնարավորություններ

1. Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր
2. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ
3. Համագործակցության շրջանակների ընդլայնում

Վտանգներ

1. Համայնքում բնակչության միգրացիայի աճ
2. Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղվածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված

համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակներիառաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Համայնքում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Համայնքը ունի խիստ անհրաժեշտություն գյուղմթերքների ընդունման և իրացման կետի առկայության: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել ՀՀ կառավարություն առջև ստանալու անհրաժեշտ ֆինանսական ներդրումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 60 մլն ՀՀ դրամ, որն ակնկալվում է ստանալ ՀՀ Կառավարության պետական աջակցության ծրագրի շրջանակներում: Այժմ տարվում են աշխատանքներ այդ ուղղությամբ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականի ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ:

Համայնքի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թէ՛ ներդրողների և թէ՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում կանաչ տարածքներ: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2020 թվականներին պետական աջակցությամբ, որի համար անհրաժեշտ է շուրջ 80 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: Փողոցային լույսեր համայնքի փողոցներում չկան: 2019 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի գլխավոր փողոցի 1,5կմ ճանապարհի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 5 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 0.5 մլն դրամ, մնացած 4.5 մլն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

ԾՐԱԳԻՐ 4

ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՎ ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:

Գերեզմանոցի ճանապարհի անբարեկարգ վիճակը խնդիր է համայնքի բնակիչների համար: Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2018 թվականի տարեկան բյուջեի միջոցների հաշվին ամբողջությամբ բարեկարգել ճանապարհը, որի համար անհրաժեշտ է նախնական գնահատմամբ 2,6 մլն դրամ, որով նախատեսվում է բարեկարգել շուրջ 2,7 կմ ճանապարհ:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ:

Եղեգիս համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես երկու շաբաթը մեկ անգամ կազմակերպվում է կենցաղային աղբի տեղափոխում, սակայն նշված աշխատանքները բավարար չեն համայնքում ամբողջական մաքրություն իրականացնելու համար: Բացի դա համայնքում չկա աղբավայր: Աղբը անխնա թափվում է գյուղում հոսող գետերի մեջ և ափերին, որը իրական աղետ է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Հետևաբար անհրաժեշտ է համայնքում իրականացնել շաբաթական 2-3 աղբահանում, տեղափոխել առաջացած ամբողջ աղբը, համայնքում տեղադրել աղբամաններ:

Գյուղի գլխավոր ճանապարհի եզրերի ջրահեռացման կիսախողովակների մաքրման կանոնակարգումը արդեն ընթացքի մեջ է, որը պետք է ունենա շարունակական բնույթ: Նախատեսվում է համայնքային բյուջեից ամենամյա ֆինանսական միջոցներ հատկացնել ծրագրի իրականացման համար 2017-2021թթ-ին, որի համար նախատեսվում է համայնքի սեփական եկամուտներից տարեկան տրամադրել 1,5 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 6

ՈՌՈԳՄԱՆ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:

<<Անտառի աղբյուր>> կոչվող խմելու ջրի խողովակը գտնվում է անբարեկարգ վիճակում, նախատեսվում է հիմնովին վերանորոգել այն:

Համայնքով անցնում է <<<Երմոն-Ելփին>> ոռոգման ջրատարը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգել գյուղի հողամասերի զգալի մասը՝շուրջ 60հա հողատարածք, որն ունի ոռոգման ջրի խնդիր:

Ծրագրի իրականացման համար համայնքապետարանը կկազմակերպի անհրաժեշտ աշխատանքները և 2017-2018 թվականներին տարեկան բյուջեով կտրամադրի 990 հազար դրամ:

ԾՐԱԳԻՐ 7

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ:

Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմամշակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես էկոտուրիզմ, լեռնային տուրիզմ, ագրոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ: Այս առումով բացառություն չէ նաև Եղեգիս համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության վերը նշված ձևերի զարգացմանը, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում Գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը կառուցվել է 1703 թվականին ավելի հին եկեղեցու ավերակների վրա, իսկ սուրբ Կարապետ, Զորաց եկեղեցիները 13-րդ դարի կառույցներ են: Հատկանշական է, որ Զորաց եկեղեցում է կատարվել ռազմի դաշտ մեկնող զորքի երդման և օրհնության արարողությունները:
Համայնքում չեն գործում հյուրատներ, որոնց առկայությունը կխթանի եկամուտների ներաճին,որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, ինչպես նաև դիմելով ծրագրերի (մասնավորապես մարզում գործում է Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը, որը տրամադրում է 6% վարկեր համայնքների բնակիչների կողմից ներկայացված բիզնես ծրագրերի համար):
Այսպիսով նախատեսվում է համայնքում վերը նշված միջոցներով առաջիկա 5 տարիներին՝ 2017-2021թթ. ընթացքում ստեղծել հյուրատներ, հասցնելով մինչև 5-ի: Ինչպես նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ զբոսաշրջային սեզոնին կազմակերպել այցեր ոչ միայն պատմամշակութային վայրեր, այլև մասնակցություն բերքահավաքի, գինու և այլ գյուղատնտեսական արտադրանքների պատրաստման գործընթացներին: Կազմել տուրեր էքստրեմալ տուրիզմ նախընտրողների համար:

4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքիզարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականցվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագերի աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- ՀՀ Պետական աջակցություն
- Համայնքի սեփական ներդրում
- Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականցման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: